

Խանջյան համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2013 թվականի առաջին կիսամյակի գործունեության վերաբերյալ

«13» Հունիս 2013թ.

Գ.Խանջյան

Հարգելի Խանջյան համայնքի բնակիչներ, այսօրվա ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2013 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների, բյուջեի կատարողականի, առկա հիմնախնդիրների մասին, վերջում ակնկալում եմ, որ կծավալվի ակտիվ քննարկում, մտքերի փոխանակում, հարց ու պատասխաններ, առաջարկություններ:  
 Գյուղատնտեսության համար զարման բարենպաստ եղանակը կազդի բնակչության սպասվելիք եկամուտների վրա, որը կանդրադառնա բյուջեի եկամուտների հավաքագրման աշխատանքների գործընթացին:  
 Սակայն մենք կաշխատենք ապահովել 2013 թվականի բյուջեյում նախատեսված սեփական եկամուտների հավաքագրման բարձր տոկոս:

Խանջյան համայնքի 2013 թվականի գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով կազմում է առ 01.07.2013թ. 36.316.9 հազար դրամ:  
 Առկա բյուջեով նախատեսված է լուծել Խանջյան համայնքում ծառացած հիմնախնդիրները: Արմավիրի մարզի Խանջյան գյուղապետարանի բյուջեն մուտքային և ծախսային մասով ունի հետևյալ տեսքը

մուտքային մաս

	նախատեսված	կատարված	տոկոս
1. հողի հարկ	8700.0 հ.դ.	344.6 հ.դ.	4.0%
2. գույքահարկ	2000.0 հ.դ.	582.5 հ.դ.	30.0%
3. տեղական տուրքեր	152.0 հ.դ.	57.8 հ.դ.	38.0%
4. ոչ հարկային եկամուտներ			
ա) հողի վարձավճար	350.0 հ.դ.	0	0%
5. դոտացիա	20.644.9 հ.դ.	10.322.0	50%
6. տարեվերջին ազատ մնաց.	1.600.1 հ.դ.		
ա) ֆոնդային բյուջե	1.037.9 հ.դ.		

Բյուջեի եկամուտների ցածր տոկոսը պայմանավորված է բերքի վատ յուրացման պայմաններից:

ծախսային մաս

վարչական

ֆոնդային մաս

1. տեղական ինքնակառավարում	11.089.30 հ.դ.	
2. գրադարան	277.800 հ.դ.	
3. կուլտուրայի տուն	594.800 հ.դ.	
4. կրթություն	278.000 հ.դ.	
5. այլ մշակութային կազմակերպություն	200.000 հ.դ.	
6. շրջակա միջավայրի պաշտպանություն	247.500 հ.դ.	
7. սոցիալական պաշտպանություն	800.000 հ.դ.	
8. պահուստային ֆոնդ	2.750.000 հ.դ.	
9. Զրամատակարարում		
(շենք-շինությունների վերանորոգում)		500.000 հ.դ.
10. կոմունալ ծառայություն	500.000 հ.դ.	

Խանջյան համայնքում կազմակերպվել է մի շարք միջոցառումներ՝

1. Կատարվել է փողոցների և գերեզմանատան միջավայրի սան.մաքրում, ինչպես նաև սավաղատար առուների մաքրում:
2. Դաշտամիջյան և գյուղի փողոցների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Ռազմավարական կտրվացքով Խանջյան համայնքի սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար ընտրվել է հետևյալ ուղվածությունները՝

1. Բուժ կետի շենքային պայմանների բարելավում:
2. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
3. Գյուղամիջյան ճանապարհների բարեկարգում:
4. Ոռոգման ցանցի վերանորոգում:

Սակայն համայնքում առկա են դեռ լուծում պահանջող հիմնախնդիրներ:

Համայնքի



ղեկավար

Ս.Ավագյան